— Այո, այդ հեշտ կը լինէր, եթէ ամէն մարդ Կարօյի սիրտը եւ զարգացումը կունենար:

Բայց որտեղի՞ց ստացաւ նա այդ զարգացումը, ես այդ մասին ոչինչ չգիտէի: Չգիտէի նաեւ նրա միւս ընկերների՝ Ասլանի եւ Սագօյի, կրթութեան գաղտնիքը: Այդ երիտասարդները իմ աշակերտակիցներն էին, առանց մի բան սովորելու, թողեցին տէր Թոդիկի դպրոցը եւ անյայտացան, բայց տարիներից յետոյ յայտնուեցան, բոլորովին փոխուած, բոլորովին այլ մարդ դարձած: Մինչեւ այսօր մի առիթ չէր ներկայացել, որ հարցնէի Ասլանից, թէ ի՞նչ հրաշք էր այդ: Երբ այժմ խնդրեցի նրանից պատմել, նա պատասխանեց.

— Ես մի օր բոլորը կը պատմեմ քեզ, բայց դեռ ժամանակը չէ...

Ոստանայ հովիտը մի երկայնաձեւ ձորադաշտ է, որ սեղմուած է Արտոս լեռան գրկում: Ամէն տեղ սփռուած են պատմական հին յիշատակարաններ: Իշխանական բերդերի, ամրոցների փշրանքներն են մնացել: Պահպանուել են միայն սրբութեան տաճարները: Կրօնասէր ժողովուրդը առաջինը զոհեց՝ երկրորդը չկորցնելու համար:

Մենք երկար չմնացինք Ոստանայ բերդի աւերակների մօտ: Երբ ձիաները բաւական հանգստացած էին, երբ մենք եւս բաւական կազդուրուած էինք ճանապարհի յոգնածութիւնից, Ասլանը շտապեցրեց, թէ պէտք է ուղի ընկնել: Ես վերջին անգամ հայեացք ձգեցի աւերակների վրայ, վերջին անգամ նայեցի դէպի ծովը: Ինձ թւում էր, թէ հէնց այդ րոպէում, նրա պարզ հայելիի մէջ, ես տեսնում էի այն գոյնզգոյն ցոլացմունքները, որ արտափայլում էին, անդրադարձնելով Գագիկի շքեղ դահլիճների գոյնզգոյն ապակիների շողքերը եւ նրա օդաբեր հովանոցների ոսկեզօծ նկարները: Ինձ թւում էր, որ ալիքների մեղմ մեղեդիի մէջ ես լսում էի արձագանքը մի քաղցր նոագածութեան, որով Ռշտունեաց գուսանները զարթնցնում էին Վասպուրականի հզօր իշխանի ուրախութեան ժամերը: Սահում են դարեր, անցնում են ժամանակներ: Տեսարանը փոխւում է: Վարդագոյն ապակիների վարդագոյն շողքերի փոխարէն հոսում են արեան վարդագոյն վտակներ: Այլեւս ոսկեզօծ նկարների փայլը չէ, որ վառւում է արեւի ճառագայթների առջեւ, այդ հրդեհի բոցն է, որ լափում է փառքի եւ իշխանութեան բոլոր վայելչութիւնները: Լաց ու կոծ է լսւում... աղմուկը սաստկանում է... կրակի լուսաւորութեան առջեւ նշմարւում է դաշոյնների փայլը... մարդիկ անորոշ ուրուականների նման խլրտում են... ոմանք ընկնում են, ոմանք կանգնում են... դահլիճների կործանող կամարները ծածկում են դիակները... Կրակն ու կոտորածը ոչնչացնում է Ղարա-Մելիքների յիշատակը... բայց մի կին, մի երեխայ կուրծքին սեղմած, դուրս է սողում կրակի միջից եւ թաքչում է մերձակայ անտառում... Յետոյ